600.0224.13.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2018 թվականի №224Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի №254Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի մայիսի 18-ին «ԱՅ ԹԻ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 14-ի «ԱՅ ԹԻ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արսան-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №254Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Արսան-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0605 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0605 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ը երկարաձգելու հայտով,

բ) «Արսան-1» արևային էլեկտրակայանի կառուցման գործարար ծրագրի համաձայն՝ մեկ տարի կառուցման ժամանակահատվածից մեկ ու կես ամիսը նախատեսված էր էլեկտրական ցանցին միանալու տեխնիկական պայմանների ստացման համար, 5 ամիսը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության համար,

գ) Ընկերությունը 2018 թվականի մայիսի 2-ի №7/18 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել «Արսան-1» արևային էլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն

անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, որի համաձայն փոփոխվել են էլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշները, մասնավորապես՝ ԼԷ №0605 լիցենզիայի պայմաններով ամրագրված արևային վահանակների քանակը և հզորությունը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0605 լիցենզիայով ամրագրված «Արսան-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 14-ի «ԱՅ ԹԻ ՍԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արսան-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №254Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի հունիսի 14-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի դեկտեմբերի 14-ը» բառերով:
2. ԼԷ №0605 լիցենզիայի պայմանների 7-րդ կետում «3000» թիվը փոխարինել «3960» թվով, իսկ «330» թիվը՝ «275» թվով:
3. Ընկերությանը՝ ԼԷ №0605 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Արսան-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի մայիսի 11-ի №652-4725 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի հունվարի 28-ը գործողության ժամկետով:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 14-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
13 հունիսի 2018թ.